

## ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐՈՒՄ

### ՀԵՆՐԻԿ ՄՈՔՈՅԱՆ

Պատմության էջերը թերթելիս համոզվում ենք, որ չնայած կնոջ դերը առանձնահատուկ հնչեղություն չի ունեցել, ինչպես աղամարգուներ, բայց, այնուամենայնիվ, այն աչքի է ընկնում իր յուրահատուկ նշանակալիությունում և ինքնատիպությամբ, տղամարդու սոցիալական դերի հետ ունեցած փոխադարձ կապով և փոխադարձանվազանությունով: Ընդհանուր առմամբ, միջնարդկային փոխհարաբերությունների շարժունությունը բնութագրվում է ոչ միայն կնոջ ազատության, ակտիվության և ինքնահաստատման աստիճանով, այլև նրա ստրկական հնազանդությամբ, սահմանափակությամբ ու կախվածությամբ: Դեռ Արիստոտելն է ասել, որ «ազգաբնակչության մեջ գոյություն ունեն երեք դասակարգեր, որոնք չեն կարող գործել ինքնուրույն և միշտ պետք է գտնվեն որևէ մեկի հովանավորության ներքո. դրանք ստրուկներն են, երեխաները և կանայք»<sup>1</sup>: Երբեք չէր կարող որևէ այր լույս աշխարհ գալ, աճել, բազմանալ, սերունդներ թողնել և գոյատևել, եթե չլինեիր կնոջ հետ նրա անդադրում, համանշանակալի և երկկողմանի փոխլրացվող համագործակցությունը: Սրանով է արժեքիմաստավորվում կնոջ անմիջական ներգործությունը համամարդկային պատմության վրա. «Ընտանիքը կկազմվի առն ու կնոջ գործակցությամբ: Ազգն ալ՝ որ մեծ ընտանիք մ'է, կը կարոտի նույնպես կնոջ նպաստին, որ իր լրացուցիչ ու հավերժացուցիչ մասն է: Հետևաբար չկա ճամբարիտ քաղաքակրթություն այն ժողովրդոց մեջ, ուր արարչագործութենեն ասն «օգնական» նշանակված կինը չի բռներ իր արժանավոր գիրքը, չի բերեր իր փափուկ ձեռաց օժանդակությունն առնական կորովի բազկին, և չի դրոշմեր իր կրթիչ, ամոթիչ և ազնվացուցիչ ազդեցությունը թե առտնին և թե ընկերային կենցաղին վրա: Եվ ոչ ալ մեք՝ առանց քաջ տեղեկանալու հայ կնոջ ունեցած դերին ազգիս անցելուն մեջ, կարող ենք ճանաչել և ցույց տալ օտարաց՝ չափը մեր հինավուրց քաղաքակրթության՝ որով կը պարծինք»<sup>2</sup>:

Ինչպես բոլոր ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդն ապրել է իր «մանկական» շրջանը՝ իր կենսագործունեության այն պատմասոցիական հատվածը, որն առանձնանում է տիրապետող արտադրողական ուժերի գոյության նախնական պարզունակ կառուցվածքով և միջանձնային հաղորդակցության ցածր մակարդակով: Այդ պատճառով բացակայում է ոչ միայն մարդկային գիտակցության կարևորագույն ձևերից մեկը՝ գի-

<sup>1</sup> Большая энциклопедия, т. IX, С.-Петербург [6. г.], с. 333.

<sup>2</sup> Հ. Վ ր դ ա ն Վ. Հ ա ց ո է ն ի. Հայուհին պատմության առջև. Վենետիկ-Ս. Ղազար, 1936, էջ 5:

տությունը, այլև՝ Ես-ի ու Նա-ի, Մենք-ի ու Նրանց, կին-այր բնականոն և կատարյալ փոխառնչությունը: Մ. Խորենացու «Հայոց պատմության» առաջին գիրքը՝ «Մեծերի ծննդաբանությունը» ավարտվում է «Տիգրան և Աթոհհակ» վիպերգով: Հիշյալ պատմագեղարվեստական բնույթի երկն իր մեջ պահելով նախորդ շրջանի մի շարք արմատական գծեր, նոր ուժով է դրսևորում իր ժամանակաշրջանին բնորոշ այնպիսի երևույթներ, ինչպես ազատամտությունն ու ազատասիրությունը, Հզոր պետականության կենտրոնաձիգ ապարատի ստեղծումը, ազգային կողմնորոշման Հիմնադրումը՝ Հայկական երկրամասերի ետգրավումը, որտեղ պատմագեղարվեստական նորություն պետք է Համարել Տիգրանուհու Հայրենասիրական վառ անհատականության դրսևորումը: Նա Հայրենասերների սրբազան ցուցակում պատվավոր առաջին տեղն զբաղեցնող այն Հայ տիկինն է, որն իր Հոգևոր-բարոյական կարողություններով, մտավոր ունակությամբ, Հեռատեսությամբ և Հասարակական ծանրակշիռ գործունեությամբ չի զիջում Հայոց այրերին, և նույնիսկ, առանձին Հանգամանքներում, նրանց Հետ Համահավասար պայքարում է Հայրենիքի թշնամիների դեմ և միշտ Հաղթանակած դուրս դալիս: Իրոք, չնայած Մարաց թագավոր Աթոհհակի բազում սպառնալիքներին, թե իր կամքը չկատարելու դեպքում նրան խայտառակ ու նշավակելի կործանում է սպասում, քաջասիրտ Տիգրանուհին, սեփական կյանքը վտանգի ենթարկելով, կազմակերպվող դավադրության մասին Հայտնում է եղբորը՝ Տիգրանին՝ փրկելով նրան սպանությունից: Հայ առասպելաբանության մեջ վիպերգուները Տիգրանուհու անձնային Ես-ի առաքինությունը գովաբանում են Հենց այն պատճառով, որ նա որպես զգաստ, ուշիմ, սթափ և խելոք կին, «գեղեցկագույնն ու խոհեմը կանանց մեջ»<sup>1</sup>, կարողանում է շուտ կողմնորոշվել, կեղծիքն ու խարդավանքը տարբերել ճշմարտությունից, սերը, նվիրվածությունը՝ ատելությունից ու շողոքորթությունից և խելամիտ ու Հստակ դիրքորոշում մշակել: Նա ո՛չ խաբվում է Աթոհհակի սիրուց և իրեն տրված լայն իրավունքներից՝ և ո՛չ էլ ենթարկվում Հարազատների Հասցեին արված Աժոռահակի չարախոսություններին: «Դու չգիտես, — ասում է Մարաց թագավորը, — որ քո եղբայրդ՝ Տիգրանը նախանձել է, որ դու Արյաց տիկին ես դարձել, նրան գրգռում է նրա կինը՝ Ջարուհին»<sup>2</sup>: Չկարողանալով ներգործել անհողողող Հայուհու վրա, Հասկացնում է, «Թե Տիգրանուհին կմեռնի՝ եթե մարապարսկացու ցանկության Համաձայն չգործի»<sup>3</sup>: Տիգրանուհին, կատարելով իր Հայրենանվեր սրբազան պարտքը, կարողացավ մշակել մի այնպիսի վեհ գործելաոճ, որտեղ Համամարդկայինը Հաղթում է նեղ անձնականին, Հայրենասիրությունը՝ փառասիրությանը, խիզախությունը՝ երկչոտությանը:

Հայ պատմաբանասիրության էջերում իր Համեստ տեղն ու դերն ունի Տիգրան Մեծի կինը՝ Ջարուհին, ամուսնուն նվիրված ու ջերմորեն սիրող օրինակելի կնոջ մի կերպար: Երբ, օրինակ, Տիգրանը, Հիշեցնելով նրան

<sup>1</sup> Մ. Խորենացու. Պատմություն Հայոց. Երևան, 1968, էջ 114:

<sup>2</sup> Նույն անգում, էջ 116:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

Կյուրոսի խելքի և արտակարգ գեղեցկութեան մասին, հարցնում է, թե նա մյուսների նման ևս հրապուրված է Կյուրոսով, Ջարուհին պատասխանում է. «Վկա է աստված, որ ես նրան էի նայում, որն ասաց, թե իր անձը գլխովին կտա, որպեսզի ես ծառա չգառնամ»<sup>7</sup>: Նման պատասխանի մեջ միաժամանակ արտահայտված են հայ կնոջ ամոթխածությունը և հավատարմությունն ամուսնուն: Տիգրան թագավորի կլինը համարձակ, խիղախ, հերոսաբար մարտնչող անձնավորություն է: Նա անվարան կարող է պալատական զգեստը փոխել և զրահ հագնել, երբ դա պահանջում է հայրենիքը: Հայրենասեր Մեծի Տիկին Ջարուհին ամուսնու հետ մասնակցում է Կյուրոսի արշավանքներին և ցուցաբերած քաջութեան համար պարգևատրվում. «Այնուհետև, նա (Կյուրոսը) բերեց Տիգրանին կնոջ զարդ և հրամայեց տալ կնոջը, որովհետև նա արիաբար մասնակցել էր պատերազմին ամուսնու հետ միասին»<sup>8</sup>: Իրեն հատուկ խիզախությամբ Տիգրան Մեծի կլինը գիպեկտիկորեն փոխկապվում և կարծես նույնանում է նրա քրոջ՝ Տիգրանուհու հետ, կազմելով մեկ սերտ ամբողջություն, թրեւս դա նույն Տիգրանուհին է՝ քաղաքական ու պատմական այլ համագամանքներում:

Փառանձեմ Սյունեցու հերոսական կերպարը հայ գրականության մեջ հիշատակվում է իբրև հայրենասեր տիկին, որի համար հայրենիքի և սլետության գոյությունն ու անվտանգության պահպանությունն ավելի գերադասելի արժեքներ են, քան իր սեփական կյանքը: Նրա կերպարը ձևավորվում է աստիճանաբար, կենսական բարդ ու վտարակալի քառուղիների՝ միջանձնային իրարամերժ բախումնալից հակադրամիասնությունների բովում: Նախ, Փառանձեմը հայ վիպերգում աչքի է ընկնում առաջին հերթին իր հեքիաթային անզուգական և կատարյալ գեղեցկությամբ, հմայքով և թովչանքով: Հայ պատմիչ Ստեփանոս Սյունեցին նրան համարում է «զարմանազեղ», իսկ ըստ Փավստոս Բուզանդի «Անուուկը մի գեղեցիկ դուստր ուներ, որ շատ հուշակված էր իր գեղեցկությամբ ու պարկեշտությամբ»<sup>9</sup>: Նրա գեղեցկության համբավը շուտով տարածվում է Հայաստանով մեկ և Խանդուղի նման դեպի իրեն ձգում ոչ միայն կտրիճ Գնելին, այլև վախկոտ ու քսու Տիրիթին: Փառանձեմի գեղեցիկ արտաքինը նրա նույնքան գեղեցիկ հոգու ներդաշնակ արտահայտությունն է: Երկրորդ, ժողովուրդը ևս իր գեղագիտական ըմբռնմամբ, նրան անվանել է «կին՝ հրեշտակի կերպարանքով»: Երրորդ՝ նա հավատարիմ և անձնուրաց ամուսին է, անհունորեն սիրում է Գնելին և մինչև իր կյանքի վերջն ապրում նրանով: Ճիշտ է, Գնելի մահից հետո Խանդուղի նման չի արհամարհում իր ձեռքը խնդրողներին ու ինքնասպան լինում: Նա Տիրիթին խայտառակում է հրապարակավ անվանելով քսու և մարդասպան, իսկ Արշակին ատում, որովհետև նա «թավամազ մարմին ունի, թուխ դույն ունի»<sup>10</sup>: Ի դեպ, ազգային գերբարձր շահի զգացումը Փառանձեմին ստիպում է, որ

<sup>7</sup> Հ. Մ ա ն ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Ա., Երևան, 1957, էջ 405:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 412:

<sup>9</sup> Փ ա վ ս տ ո ս Բ ո շ ա ն դ. Հայոց պատմություն. Երևան, 1947, էջ 218:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 180:

նա սթափվի, վեր բարձրանա ջերմորեն սիրող ամուսնու, ողբասացի և անձնական վրիժառուի աստիճանից ու հանգես գա անձնուրաց հայրենասերի. քաջակորով մարտիկի դերում: Նա իր չսիրած ամուսնու՝ Արշակի, քայքայման եղբին հասած հայոց պետությունը փրկելու նպատակով վերցնում է իր հեռա մոտ 11 հազար ընտիր սպառազինված մարդիկ և ամրանում Արաագիրս բերդում, 13 ամիս շրջապատված է մնում պարսիկների կողմից, բայց չի ընկճվում: Միայն մոլեգնող ժանախտն է, որ թաղուհուն ստիպում է կենդանի մնացածների կյանքը փրկելու նպատակով թշնամու առաջ բաց անել բերդի դռները և անձնատուր լինել: Պարսից թագավոր Շապուհը Փառանձեմին համարելով իր ամենաոխսերիմ հակառակորդը, ամենահանդուգներ, ամենահամառն ու միաժամանակ ամենախիղախը, տանում է Տիրզոն և սպանում: Փառանձեմի անհատական ես-ի կերպարը որպես հայ վրիպեղություն կին-հերոսների համաստեղության փայլուն աստղերից մեկն է:

Բաֆֆին, վարպետորեն օգտագործելով Փ. Բուդանդի և Եղիշեի ստեղծագործությունները, նրբությամբ կերտում է հայրենասեր հայ կանանց անույուպական կերպարներ, որոնցից հատկապես ուշադրություն են արժանի վասպուրականի աիկնոջ՝ Համապասպուհու և Փառանձեմի հոյակապ դիմանկարները: Հայրենիքի սերը նրանց համար դերադույն արժեք է սրբություն, ամեն ինչից վեհ: Վասպուրականի տիկինը բացասական վերարժեքում ունի իր դավաճան որդու՝ Մերուժան Արծրունու նկատմամբ, որին չի ընդունում հայրական օջախի սրբազան հարկի տակ<sup>11</sup>: Նա ուրացողին նույնիսկ իր որդին չի համարում, այլ դիտում է որպես հայրենիքի թշնամի, որի դեմ հանում է իր գորարանակը...<sup>12</sup>:

Հայ դեղարվեստական մշակույթի մեջ Համապասպուհին ես ժողովրդական հերոսուհիների փառավոր համաստեղության մեջ ունի իր արժանի տեղը: Նա մեծատոհմիկ իշխան Կարեղին Ռչտունու կինն է: Վահանի և Մերուժանի հրամանով՝ Համապասպուհուն անագորույն տանջանքների ենթարկելով ստիպում էին, որ նա ընդունի մաղդեից կրոնը: Հայրենասեր տիկինը, սակայն, վճռականորեն մերժում է նման առաջարկը, քանի որ արհամարհանքով և ատելությունով էր լցված դեպի խավարամու պարսիկներն ու նրանց կրոնը:

Հայկական ոսկեդարի պատմիչների համաստեղության լուսատուներից մեկը՝ Եղիշեն՝ իր «Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին» աշխատության մեջ նկարագրում է փափկասուն, իսկ իրականում պողպատե կամփի տեր հայրենասեր տիկնանց ապրելակերպն ու նրանց բնավորությանը ընդհանուր դեկոր: Այդ պատկերապատկերները Եղիշեի «Երկի վերջին հատվածն է, միաժամանակ և նրա բանաստեղծական ընտրելագույն կտորներից մեկը, որի նմաններն իր ժամանակի համաշխարհային դրականությունն մեջ անդամ քիչ կան»<sup>13</sup>: Հայոց դեղանի ե. փափկասուն տիկնանց ամուսինների, եղբայրների, որդիների ու բարեկամների մեծ մասը չնայած

<sup>11</sup> Բ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու 10 հատորով. հ. 7, Երևան, 1956, էջ 319–323.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 528:

<sup>13</sup> Մ. Ա թ թ ղ յ ա ն. Հայոց հին դրականության պատմություն. գիրք Ա, Երևան, 1944, էջ 310:

նահատակվել էր Վարդանանց ազատամարտում, իսկ շատերն էլ չարչարանքի և խոշտանգումների էին ենթարկվում պարսկական մուլթ ու խոնավ բանտերում, բայց տոկուն և անվեհեր հայ կանայք գրեթե չէին հիշում անցյալի փափկասուն կյանքը, իրենց կենցաղով նմանվում էին չարքաչ ապրող այն ռամկուհիներին, որոնք ի գորու էին դիմանալ ամենածանր փորձություններին: Նրանք, որ «մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, այժմ շրջում են բոբիկ ոտքերով կիսաքաղց վիճակում: Նրանց մարմինները ցերեկները արևակեց էին լինում, իսկ գիշերները՝ ցրտահարվում, հազուստ ու անկողին չլինելու և կիսամերկ դետնին պառկելու հետևանքով: Հայոց աննկուն հայրենասեր կանայք մոռացել էին իրենց կանացի փափկությունը և տղամարդկանց պես դարձել էին դիմացկուն և պնդակազմ՝ արևելյան ելուզակների դեմ մղվող գաղափարական գոտեմարտում...»<sup>14</sup>: Եղիշեն որոշակիորեն ցույց է տալիս, որ չնայած պարսիկները ռազմական տեսակետից ավելի ուժեղ էին, բայց հայ ժողովուրդն իր հոգևոր-բարոյական բարձր կուլտուրայով ու կարողություններով գերազանցում էր թշնամուն. հենց դա է հիմնական պատճառը, որ նա իր բոլոր հակառակորդների դեմ մղած պայքարում մնացել է անպարտելի:

Մ. Նալբանդյանը ժողովրդի դոյուլթյան պահպանման անհրաժեշտ դորձոններից մեկը համարում էր ապադա հասարակության անդամների ընտանեկան դաստիարակությունը, որի «մեջ է ազգի ապագայի սերմը, բայց մեր ազգի մայրերը տալիս են ազգին կեղևով միայն զավակներ»<sup>15</sup>: Նա խարազանում է իր ժամանակների այն կանանց վարքն ու բարքը (սեփական ազգի ու հայրենիքի նկատմամբ անտարբերությունը), որոնք իրենց կեցվածքով ճիշտ հակասլատկերն են V դ. կանանց: «Հինգերորդ դարում, — գրում է Մ. Նալբանդյանը, — երբ հայոց ընտիր օրդիքը գոհ գնացին պարսկական վիշապին, նոցա մայրերը, կանայք, քույրերը և դստերքը սլակաս չերևեցան այն քաջերից, որ ազգի պահպանության համար քաջությունները նկան պատերազմի դաշտում... Փոշոտվեցան և ծխոտվեցան սենյակները և առադաստները նորահարսերի, և սարդի ոստայն պատեց նոցա նախկին շքեղության վերա: Շատ ձմեռներ անցան, շատ գարուններ եկան, նոցա հետ միասին և դարնան ծիծեռնակներ, բայց նոցա տղամարդիկը ետ չդարձան. նոքա յուրյանց այրիությունը նախատինք չհամարեցին, ինքյանց, այլ մանավանդ պարծանք, առաքինի ժուժկալությունը հարսնանալով երկնավոր անմահ փեսային: Այսպես էին մեր հին մայրերը և քույրերը, այսպես էին մեր կանայքը, բայց ինչ մնաց այն օրից...»<sup>16</sup>: Պարզ է եզրափակումը. XIX դ. կանայք իրենց սոցիալական կեցողության և ժամանակի ծնունդն են, բայց նրանք «դուստրեր կամ թոռներ են 5-րդ դարի մեծահորդի և խնկելի քաջ արմենուհիների...»<sup>17</sup>:

<sup>4</sup> Ե Ղ Ի Շ Ե. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. Վենետիկ, 1903, էջ 463–467:

<sup>15</sup> Մ. Ն ա լ Բ ա ն Դ յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու. Հ. Ա, Երևան, 1945, էջ 455:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 455–456:

<sup>17</sup> Նույն տեղում:

Հայ կնոջ էությունը, հոգեկան ներաշխարհը ներկայացնում է անպարտելի և առաքինի մայրություն, քաջակորով Հայրենասիրություն<sup>18</sup>: Այստեղ միանգամայն դիպուկ է հնչում Գարեգին Նժդեհի իմաստալից ասույթը. «Հայուհին, որ կարող է փոխարինել խաչափայտի առջև իր աստվածանման որդու վերքերը սգացող Տիրամորը — Հայ կինը ավելի հերոսուհի, քան թախծության մայր պիտի լինի»<sup>19</sup>: Այս առումով Հայ հերոսուհիների շարքում իր պատվարժան տեղն ունի Հայդուկային շարժման ականավոր դեմքերից մեկի, Սասնա ինքնապաշտպանության ակտիվ կազմակերպիչ Աղբյուր Սերոբի (Սերոբ Վարդանյան 1864–1899) կինը՝ Սոսեն, որն անձնուրացորեն մարտնչում էր համիդյան բռնապետության դեմ իր եղբայրների, ամուսնու և որդու հետ: Անդոք լեռան վրա ինչիլ աղայի հրոսակների զորքի դեմ վերջին թե՛ սպանեց և սոսեն արտակարգ հերոսություն ցուցաբերեց, սուլայի Հակոբի հետ օգնում էր ամուսնուն՝ Սերոբին, որն այդ անհավասար մարտում կոպեց մինչև վերջին փամփուշտը և նահատակվեց<sup>20</sup>: Շուտով ղոհվում է նաև Հակոբը, որից հետո է միայն թուրքերին հաջողվում վերավորել և գիտակցությունը կորցրած Սոսենին գերի վերցնել:

1915 թ. Վանի անկումից հետո, երբ գաղթականության հոծ զանգվածը շարժվում էր դեպի Երևան, էջմիածին, այդ օրերին վարակիչ հիվանդությունները, ժանտախտը շատերի կյանքը խլեցին: Որբերին ու գաղթականությանը օգնող բազում ինքնազոհ և ինքնամոռաց Հայ կանանց հոգատար վերարժեպետները իսկական Հայրենասիրության քաջարի օրինակ է և արժանի է բարձր գնահատականի: Նրանցից հատկապես «անմոռանալի պիտի մնա հիշատակը Սաթենիկ Օհանջանյանին, որ ղիչեր-ցերեկ վարակիչ հիվանդները խնամելով ինքն ալ զոհ գնաց քույրային»<sup>21</sup>:

Վ. Թոթովենցը հատորեն իմաստավորում է. «Մեր կորուստին, մեր աստվածային չարչարանքներին բուն էությունը կկայանա այն բանին մեջ, որ մենք ունեցած ենք լուսի ու գեղեցկության պայծառ անցյալ մը և գիտակից այդ գեղեցկության տառապած ենք, մարտնչած ենք պահելու այդ լուսավոր գիծը և ընդդեմ այդ ծափահարելի համառության՝ մենք չարչարված ենք և կոտորված»<sup>22</sup>: Նա պատմում է, որ եղեռնի օրերին Երիզայի դաշտում մոտենում է եփրատին և տեսնում, թե ինչպես մի Հայ կին իր ագատված մանկան շորերը լվանում է գետում և երգում.

Ես քու շորերդ իմ աղաս.

Հորդ արյունով ներկված

Եփրատին մեջ լվացի<sup>23</sup>:

Երբ 1915 թ. վերջերին Անդրանիկը Հյուսիսային Կովկաս էր մեկնել Հայ գաղթականներին օգնելու առաքելությամբ, Պյատիգորսկ քաղաքում նրա պատվին տեղի Հայ մեծահարուստները կազմակերպեցին Հանդիսավոր Ե-

<sup>18</sup> Ի դեպ, Հայ կնոջ էության բացահայտման դործում իրենց արժանվույն ներդրումն ունեն նաև օտարազգի հետազոտողները. այդ մասին մասնավորապես տե՛ս Ա. Ե. Զ. ա - ք ա յ ա ն. Բորիս Լազարևսկին Հայաստանի և Հայ կանանց մասին. Երևան, 2004:

<sup>19</sup> Գ ա ռ ի գ ի ն Ն ժ ղ Ե Հ. Ասույթներ. Երևան, 2002, էջ 33.

<sup>20</sup> Հարազատ պատմություն Տարոնո. Կահիրե, 1962, էջ 103:

<sup>21</sup> «Պայքար», 8. V. 1940:

<sup>22</sup> «Հայաստան», 9. VII. 1917:

<sup>23</sup> Նույն տեղում:

ընկո: Նրանցից շատերը Հանդիպման էլին եկել իրենց պճնադարձված կանանց հետ. դա այն տազնապալի ժամանակն էր, երբ Հայոթյունը գտնվում էր անասելի ողբերգական վիճակում: Հանդեսի ժամանակ արտասանված փքուն ճառերն անհուն ցասում առաջացրին Անդրանիկի ետախարհում, և նա վրդովված դիմեց ներկաներին. «Շատ եմ տեսել ես նման բանկետներ, և լսել օվացիաներ, դեղեցիկ ճառեր, ճոճուս ֆրագներ... Սակայն, ինչ օգուտ այդ բոլորից իմ տանջված ժողովրդի համար... Ինչո՞ւ համար եք դուք զուգովել թանկագին զգեստներով: Հանեցեք այդ ամենը և ղոհաբերեցեք բախտից անիծված, սև ճակատադրի զոհ, աղքատ ու քաղցից մեռնող Հայ եղբայրներին...»<sup>24</sup>: Ականաաեսներուց մեկի վկայությամբ, «Անդրանիկը անմիջականորեն դիմելով կանանց ասաց. «Կպահանջեմ ձեզից ալ օրինակ մը վերցնեք 5-րդ դարի Հայ կնոջից, ծախե՛ք վաղը այդ զարդարդանքը և տրամադրեք Հայ որբերուն՝ Հացի, սննդի համար, նրանք են ձեր ոսկին, Հայ ժողովրդի հույսը»<sup>25</sup>:

Հայ կնոջ Հայրենասիրական ոգին իր ցայտուն դրսևորումն ստացավ Հատկապես Ղարաբաղյան գոյապայքարում: Պատերազմ, որն անջնջելի ու խորը հետք թողեց Հայ կանանց հոգում, որովհետև նրանք կարծես ձեռք բերեցին հոգեբարոյական ուրույն կենսադիրք: Հատկանշական է, որ 1988-ի և 1989-ի հանրահավաքների ժամանակ կամավորական ջոկատներին զինվորագրվելու ու մարտի դաշտ մեկնելու կոչերին հայրենասիրական բուռն ցանկությամբ աչքի էին ընկնում հասկապես այն մայր-կանայք, որոնք մահվան էին գնում՝ տանը թողնելով երկու, երեք և ավելի երեխաներ: Միանգամայն գիտակցված հոգեբանական գիծ էր դարձել այն սառնասիրտ դիրքորոշումը, որ նախընտրելի է ճակատում լինել իրենց այրերի կողքին, նրանց հետ նայել մահվան աչքերին, օգնել նրանց, դուրս բերել վիրավորներին մահվան օղակից, սփոփել, ոգեշնչել և դարմանել, քան թիկունքում մնալ մշտական ապրումների ու տազնապալի սպասումների մեջ: Ահա թե ինչ է դրում իր վերջին նամակում Աղավնի Տեր-Ստեփանյանը.

... Անկարող եմ ես չկովել,  
 Երբ աեսնում եմ կովողներին,  
 Անկարող եմ հանդիստ նստել,  
 Նայել լացող մեր մայրերին...  
 Դրա համար պետք է կովեմ՝  
 Թեկուզ մարտում ինքս էլ ընկնեմ...<sup>26</sup>

Այսպես, երբ Անուշ Ավագյանի մայրն աղերսադին խնդրում է դստերը, որ իր պառավ տատի հույսին չթողնի երկու անչափահաս զավակներին և ճակատ չգնա, նա պատասխանում է. «Մայրիկ ջան, ամեն ընտանիքից մեկը պետք է գնա, մեր տան տղամարդն էլ ես եմ»<sup>27</sup>: Ծանր վիրավորվելուց հետո, դեռ լրիվ չապաքինված, Անուշը կրկին վերադառնում է վաշտ: Երբ մարտական ընկերները փորձում են ետ պահել նրան, ասում է. «Ես չեմ կարող հեռանալ, հրե դեռ նոր եմ սկսվելու ծանր կոտորածը, դեռ Արդախն

<sup>24</sup> «Բանբեր Հայաստանի արիւիւների», 1965, №1, էջ 16-17:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>26</sup> Հ. Վ ա Ր դ ա ն յ ա ն. Անկարող եմ ես չկովել. - «Նե», 1996, մայիս, էջ 15:

<sup>27</sup> Նույն տեղում:

ադատագրված չէ»<sup>28</sup>: «Կանայք, Հատկապես կանայք ու աղջիկները, – գրում է Ղաբարադյան Հակամարտության տարեգիր Բ. Ուլուբաբյանը, – որքան խելոք, արդար ու վարակիչ են նրանց խոսքերը: Նրանք ինչպիսի տրամաբանական հյուսվածքի մեջ են առնում իրենց ապրած կյանքի ցավն ու հույսը, պայքարի կամքն ու վճռականությունը, հաղթանակի հույսն ու հավասար»<sup>29</sup>: Պետք է փառաբանվի և գալիք սերունդներին ներկայացվի Ղարարադյան գոյամարտում իրենց արժանի ներդրումով աչքի ընկած բազում Հայ Հայրենասեր կանանց Հերոսական նս-ի կերպարը Հանձինս Աիդա Սերրյանի, Ժաննա Գալստյանի, Էմմա Գաբրիելյանի, Արզիկ Սխիթարյանի, Հասմիկ Ղարայանի, Զուլիխտա Ավազյանի, Կարինե Գալուստովայի, Լյուդմիլա Մարությանի, Նելլի Ղուլյանի և այլոց: Տեղին են Հնչում Գ. Նժդեհի իմաստուն այն խոսքերը, որ մայրերի ափի մեջ սլիտի փնարել աղիների ճակատագիրը<sup>30</sup>: Հայ կանայք իրենց Հերոսական գործելակերպով մեկ անգամ կրկին ապացուցեցին, որ իրենց հաշխարհում միշտ վառ են պահում եղիչի «Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին» ստեղծագործության հայրենաշունչ ոգու սրբազան իմաստը, որի նշանաբանն այն է, որ յուրաքանչյուր անձ՝ թե՛ կին, թե՛ այր, միշտ պետք է պատրաստ լինի իր կյանքը կամավոր դնել զոհասեղանին հայրենիքի ազատության և ժողովրդի փրկության համար, անսուսկալ մահը, դատաւարով ժողովրդական Հերոս անմահացնելով իր նս-ը:

## ОБРАЗ ЖЕНЩИНЫ-ПАТРИОТКИ НА СТРАНИЦАХ АРМЯНСКОЙ ИСТОРИИ

ГЕНРИК МОКОЯН

Р е з ю м е

Проблема патриотического образа армянской женщины находится в центре внимания историко-филологической и общественно-политической мысли. Патриотический образ армянской женщины, ее героический дух и непоколебимая воля ковались еще на заре становления армянского этноса. Армянская женщина проявила себя принципиально и мужественно не только против персидских и арабских завоевателей, но и против турецких каннибалов. Последним мужественным экзаменом патриотизма и преданности армянских женщин-матерей вечным и истинно армянским святым ценностям явилась Карабахская освободительная война, где они вновь прославили себя как настоящие героини, вместе с мужьями выдворив из этой исконно армянской земли турок-азеров.

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Բ. Ուլուբաբյան. Արցախյան գոյապայքարի տարեգրությունը. Երևան, 1997, էջ 10:

<sup>30</sup> Գ. Նժդեհ. Նշվ. աշխ., էջ 33:



THE IMAGE OF THE WOMAN-PATRIOT  
IN THE PAGES OF ARMENIAN HISTORY

*HENRIK MOKOYAN*

S u m m a r y

At present the problem of the patriotic image of the Armenian woman is in the center of both the historical-philological and the social-political thought. The patriotic image of the Armenian woman, her heroic spirit and unshakeable will hardened at dawn of formation of Armenian ethnos. The Armenian woman distinguished her character, her individual "I" and displayed it bravely not only against the Persian and Arabian conquerors but also against Turkish cannibals. The last example of patriotism and devotion of the Armenian women-mothers towards the everlasting and truly Armenian sacred values appeared during the Karabakh war of liberation where they again glorified themselves as true heroine-Vardanids together with their husbands turning the Turks-azers out of the native Armenian land.